Գրեթէ երկու դար տեւեց Քլէրմոն ժողովի ազդեցութիւնն՝ ի Գաղղիոյ, յԱնգղիոյ, յԻտալիոյ նա եւ ի Հիւսիսոյ դուրս եկին հոյլ հոյլ խաչակրաց ճամբարք։ Հաշուել են որ մինչ 7 միլիոն անձինք խուճապեցին դէպ յԱսիա, պատճառ որ՝ խոստացել էր եկեղեցին արձակումն բոլոր մեղաց եւ հոգացողութիւն նոցա ընտանեաց, որբոց եւ այրեաց։ Եթէ մի երկնային վարձատրութեան յոյսը զօրութիւն չունենար ազդել ի նոսա մի երկար ու աղետաբեր արշաւանք, սակայն ճանձիր պարտատերաց Երեսէն խոյս տալու եւ յԱսիա եւ Յելլադայ բախտ որոնելու առիթը շատ զօրեղ էին։ Շինականք, որոց վիճակն կարի խիստ տաղտուկ էր այն բարբարոսութեան ժամանակ, կամօք եւ ուրախութեամբ կը թողէին իւրեանց արօրը ի հետամտութիւն մի այնպիսի ազատութեան, զոր չէր մարթ գտանել ի հայրենիս իւրեանց։

(Շ-ր-Ն-Է-Ա)

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՊՍԱԿՆԵՐ.

(Ընդ-ել Բ-ա-ն Ֆ-ս-ր-դ)

Իւր կեանքը բաւական ժամանակ բարեբաղդութեամբ անցնելէն յետոյ, յանկարծ փոխուեցաւ Պ. Վ-ն-ժ-ոյին գործերուն հանգամանքը։ Առեւտրին անյաջող ընթացքը, անակնկալ սնանկութիւնը քիչ ժամանակի մէջ քանդեցին զնա։ Նա չկարողացաւ տանել այս սաստիկ հարուածին։ Նա մեռաւ, և նորա կինը մինակ մնաց աշխարհիս մէջ չորս հատ որբերով։

Տիկին Վ-ն-ժ-ոն կամենալով պահպանել իւր զաւակաց ազնիւ անունը, որպէս իւր բոլոր իրաւունքներէն՝ նոյնպէս և իւր ամուսնոյն առեւտրական անյաջող ելից վերաբերեալ պատճառների հետազօտութիւններէն հրաժարեցաւ, որով դեռ ևս օգուտ քաղել կկարենար, — և այս կերպով ընկաւ վերջին չքաւորութեան մէջ։

Եւ սակայն չկորցոյց նա իւր ոգւոյն անվհերութիւնը, իւր որդւոցմէ մէկը — Յան՝ իւր մօտն էր, միւս մեծերը լաւ ոճիկներով պաշտպաններ գտած էին։ Որբևարի Վ-ն-ժ-ոն թէ և իւր ձեռաց աշխատութեամբը հազիւ հաց կհայթայթէր զաւուրն պարէն, բայց հոգեկան վիշտ, և կարեւոր պիտոյից պակասութիւնը ըստ առեցին նորա ուժը, որով և հիւանդացաւ։

Վանդալիայի Տէփարթամէնթին և-պարգոն Պ. Սէռ, և (Notre – Dame – des – Neiges) անուանեալ եկեղեցւոյն) ծխատէր երէցն Պ. Ընդմառ շարժելով այդ կնոջ այնպիսի խղճալի դրութենէն, տեղաւորցուցին Յանը մի դպրոցի մէջ, և սակաւ ինչ օգնեցին մօրը։ Բայց անբաղդ կնոջ տանջանքը օրէ օր կաւելնար, նորա առողջութիւնը սակաւ առ սակաւ նուազելով բոլորովին խանգարեցաւ անընդհատ աշխատութենից, և բժշկին նշանակած դեղորայք ևս նորա համար շատ թանկ էր։ Երկոքին պաշտպանք վճռեցին վերջապէս այս խեղճ կնիկը, առողջութեան պայմաններուն ամենակարևոր հոգացողութեան համար, տեղաւորցնել զնա հասարակաց հիւանդանոցը, գոնէ այնքան ժամանակ՝ մինչև որ Յանը, որոյ ուսումնառութեան մէջ գերազանց յառաջադիմութիւնը կպատրաստէր փառաւոր վիճակ մի, կարող լինի ինքն պահպանել և անդորրացնել զնա։

Բ.

Իսկ այդ ժամանակ Ժանը կգտնուէր դպրոցի մէջ, և չէր տեղեակ իւր մօրը անբաղդ ապագայէն: Նորա հիւանդանոցը տեղաւորուելէն քանի մի օր յառաջ Պատուելի Եղիմառը պարտք համարեց իւրեան իմացնել պատանւոյն՝ նորա մօրը դըրութիւնը: Ուստի և դպրոց կուղևորի, և Ժանը նորա հետ ի միասին կելնէ անկից՝ իւր ամենալաւ հագուստովը, որպէս թէ զբօսնելու կերթայ:

Երէցը իւր տունը կբերէ զնա, և դեռ տխրալի լուրը չհաղորդած նմա, կթողու զնա առանձին:

— Ես շուտով կվերադառնամ, բարեկամ, ասաց նմա: Սպասէ ինձ այս տեղ սակաւիկ ինչ, և զբաղիր քեզ հաճելի եղած գրեանց հետ. — միայն թէ չըդըպչիս իմ պաշտօնական յիշատակարանիս:

Ժանը կնայի Երէցին մատենադարանը և կորոնէ թէ չգանէ՞ր արդեօք զուարճալի միանգամայն և օգտաւէտ գիրք մի ընթեռնլոյ:

Սակայն նորա հայեցուածքը ակամայ կդառնայ դէպ ի պաշտօնական յիշատակարանն:

— Վասն է՞ր, կմտածէր նա ինքնիրեն, Երէցը արգելեց ինձ դպչելոյ այդ յիշատակարանին: Արդեօք ի՞նչ գաղտնիք կայ դորա մէջ:

Իսկ վերջապէս հետաքրքրութեամբ հըրապուրուած, Ժանը կմօտենայ յիշատակարանին, և կառնու զայն, — կբանայ, բայց յանկարծ ոտքի ձայն կլսէ քովի սենեկին մէջ: Նա կփութայ յիշատակարանը իւր առաջուան տեղը դնել, բայց շփոթուած լինելով ձեռքէն վար կձգէ, որոյ մէջէն թղթի կտոր մի վար կիյնայ: Ժանը կծռի, որ վերցնէ թուղթը: Մօրը անունը կապշեցնէ զինքը . . . : Նա կնայի դողդղալով այդ թղթին վերայ . . . կընթեռնու . . . այդ հիւանդանոցի տոմսակն էր:

— Հիւանդանոցի տոմսա՜կ . . . կասէ նա, պատին կռթնելով, որպէս զի չընկնի սաստիկ վրդովութենէն . . . տոմսակ իմ մօ՜րս համար . . . : Ո՜հ, ոչ . . . ոչ, այդ անկարելի է:

Ողորմելի պատանին կընկնի աթոռի վերայ գլուխը ծռած . . . և սակայն, չնայելով իւր վերջի աստիճանի թուլութեան, քանի մի վայրկենէն կելնէ և կվազէ անյուշաբար:

Այս եղելութենից փոքր ինչ յետոյ, Պ. Եղիմառը ներս կմտնէ և կտեսնէ, որ Ժանը իւր հետաքրքրութիւնը բաւականացուցել է: Մտածելով, թէ արգելման դրժողութենէ յառաջացած ամօթն հարկադրեց զնա պահուելոյ, կսկսի որոնել զնա ամեն տեղ . . . կկանչէ, բայց Ժանը չերևար . . . : Վերջապէս նա վերադարձաւ, բայց արդէն աշակերտի պարզ և ամենօրեայ հագուստով:

— Հետաքրքրութիւնդ զքեզ փոքրիկ մեղքի մէջ ձգեց, որդեակ իմ, — ասաց նորա Եղիմառ հեզութեամբ. — բայց դու արդէն պատժուած ես, և որպէս զի քո արտասուքներդ ոչ ոք չտեսնէ, այդ պատճառաւ ալ պահուըտեցար:

— Ո՛չ, պատուելի երէց, ես լացած չեմ և զղջալու գործ ես գործած չեմ, այժմ ես բոլոր իրողութիւնը գիտեմ: Իմ մայրս հիւանդանոց պիտի չերթայ, վասն զի այն

տեղ իւր տրամութիւնէն կմեռնի։ — Ես այսուհետև դպրոց չեմ գնար, ես նորա հետ կմնամ։

— Ի՞նչ կզրուցես դու Ժան։ Ինչպէս չես երթար դպրոց. նա մանաւանդ մի միայն միջոցը, որ մնաց քեզ օգնելոյ քո մօրդ և պահպանելոյ զնա։ Դու ջանասիրութեամբդ կարող ես դու սակաւ ժամանակէն ամենալաւ վիճակ ունենալ աշխարհիս մէջ, և յետոյ . . .

— Ո՜չ, ո՜չ, ես չեմ կարող զնա թողուլ . . . ։ Իմ մայրս հիւանդանոցի մէջ . . . իմ խեղճ մայրս . . . ։ Ո՜չ, պատուելի երէց, ես չեմ բաժանուիր այժմ նորանէն։ Ես չեմ թողուր զնա։ Ուր որ նա երթայ, նորա հետէն կերթամ և ես . . . ։ Թէպէտ ես շատ դեռ փոքր եմ, բայց ես ունիմ ոյժ։ Ես կրանիմ և Աստուած ալ չթողուր զիս։ Իմ մայրս հիւանդանոցի, նա որ ամենալաւ վիճակի սովորած էր և կարժէր անոր . . . ։ Իմ մայրս հիւանդանոցի, և ինձ ալ ուսումնարան . . . ինձ, որ կբաղկացնէ նորա մի միայն մխիթարանքը աշխարհիս վերայ . . . ։ Ո՜չ պատուելի երէց, այդ անկարելի է։

Ընդհատը Ջան իւրոյ գործ դրաւ յոժարեցնել Ժանը՝ հրաժարեցնելոյ իւր վճռողական դիտաւորութենէն, բայց չկարողացաւ։

Օր մի Ժան յիշատակեալ երէցին տունը հրաւիրեց իւր մեծ եղբայրները, որոնք արդէն կարողութիւն ունէին ինքզինքին պահպանելու։

— Եղբարք իմ, ասաց նա նոցա, ես զձեզ այս տեղ հրաւիրեցի, որպէս զի մեր ծնողին վերայ խօսակցինք։ Դա ամենայն ինչ զոհեց մեզ համար, և այժմ աղէտալի վիճակի մէջ աղքատութիւն կը քաշէ։ Յոժար էք դուք օգնել ինձ նորա պահպանութեան համար։

Եղբայրները ամենևին պատասխան չը տուին։

— Ի՞նչ, բացագանչեց Ժանը, — դուք կլռէք։ Բայց դուք կմոռանաք, որ ես մեր մօրը վերայ կզրուցեմ ձեզի։ Դուք կմոռանաք, որ սա այն է, որ տուաւ մեզի կեանք։ Դուք կմոռանաք նորա աշխատանքները, նորա տանջանքները, անբաղդութիւնները . . . ։ Դուք կմոռանաք, որ այն բարի անուանը համար, զոր մենք կրեմք, նա վճարեց զոհելով իւր իրաւունքը և բարեկեցութիւնը . . . ։ Երբ որ դուք չէք կամիր ինքնիդ հանգստացնել զնա, տուէք ինձ գոնէ միջոց ինչ առ այն . . . ։ Տուէք ինձ փոխարինաբար փոքրիկ գումար մի, որ ես կարող լինիմ օգնել նորա գլխաւոր պիտոյից . . . ։ Ո՜հ, ես կվերադարձնեմ ձեզի զայն . . . կերդնում մեր մօրը անուամբ, անուամբ՝ որով ձեզի կապաչեմ . . . ։

Ա. Ժիլոյին եղբարքը, առանց շարժելոյ նորա գգուանաք և սիրով առլցեալ արտէն բղխած վիհանձնական խօսքերէն, ասացին Ժանին թէ, նոքա օգնելու կարողութիւն չունին։

Մեծարելի և ծնողասէր պատանին մընաք բարեաւ կասէ նոցա, առանց ամենևին բերնէն նախատական խօսք մի հանելոյ։

— Դէ այսպէս ուրեմն, ասաց նա ինքն իրեն հրճուանօք, ինձ միայն կպատկանի իմ մօրս օգնելու բաղդաւորութիւնը, ինձ միայն վիճակեցաւ պաշտպանել զնա, սիրել՝ փոխանակ նոցա բոլորին . . . ։

Աստուա՛ծ իմ . . . աւելցուր իմ ոյժս . . . կրկնապատկէ իմ արիութիւնս և օգնէ ինձ անթերի կատարել սրբազան պարտաւորութիւնս։

Գ.

Մի՜ւս օրը Ժան՝ ընայելով շատերուն խորհրդին, որոնք կարի ջերմ ցաւակցութիւն կըզգային, սկսեց նոր կեանք՝ նուիրելով ինքը զինքը սքանչելի որդիական հաւատարմութեամբ, և պատրաստ ամենատեսակ զոհաբերութեանց և զրկանաց։ Նա ծախեց իւր նոր հագուստը, մինչև ժամացոյցը՝ տարեկան հարցաքննութեան հանդիսին մէջ իբր պարգև ընդունած ընծայն։ Եւ սկսեց շրջավաճառութիւն անել, և ծախել կարկանդակ, տղայոց խաղալիքներ։

Ո՜հ, լեզուով չէր կարելի պատմել թէ՝ որչափ սրտառուչ էր տեսնել խեղճ Ժանը ուսումնարանի դրան քով՝ իւր ապրանքով, որ իւր առաջուան ընկերներուն արձակմանը կսպասէր։

Նա ամենևին չէր մտածէր այն օգուտը՝ որ թողել էր։ Մայրը . . . մի միայն մայրըն էր գրաւել նորա բոլոր միտքը։ Նա կփափագէր միայն մէկ բանին, այս ինքն իւր մօր հանգստութեան, նորա ուրախութեամբը ինքն կուրախանար, նորա բաղդաւորութեամբը ինքն զինքը բաղդաւոր կհամարէր, — ահա նորա կենաց ամենասիրելի երևակայութիւնը, — անկից անդին նա մէկ բան ալ չէր տեսնէր, և որպէս զի այդ բանին հասնի, կը կրէր ամենայն ինչ առանց տրտունջանաց և առանց գանգատանաց։ Աղքատութիւն, դժուարութիւն, հոգնածութիւն . . . նա կը յաղթէր ամենուն ալ, որովհետև ասոնք իւր մօրը համար էր՝ որ կտանջուէր։

Քսան տարի այսպիսի կեանք անցուց Ժան առանց մի օր երեսի վերայ թողնելու իւր մայրը։ Նորա մի միայն զուարճութիւնն էր զկնի ամբողջ օրուան ծանր աշխատութենից, զբօսնուլ իւր մօր հետ, զոր նա մեծաւ հոգացողութեամբ կպահպանէր որ չընկնի։ Այն ժամանակ ինքը զինքը բաղդաւոր կհամարէր և լիովին կը վայելէր իւր աշխատանաց պտուղը։

Երբեմն պատահելով իւր առաջուան ուսումնարանի ընկերներուն և տեսնելով նոցա շքեղաշուք դրութիւնը և հարստութիւնը, նա ինքն իրեն կասէր, որ ինքըն ալ մի և նոյն բաղդաւորութիւնը պիտի ունենար . . . գուցէ և աւելի ևս։

— Եւ սակայն իսկոյն կը յիշէր, որ այդ բանին համար նա պարտաւորեալ էր իւր մայրը երեսի վերայ թողուլ, — անմիջապէս կսեղմէր կուրծքին վերայ հիւանդանոցի տոմսակը, զոր նա միշտ իւր մօտը կը պահէր։

Ա՜խ, ճշմարիտ չէ՞, որ այդ ազնիւ և ամենաընտիր սիրտ էր։ — Ժան Վեժեօն ստացա՞ւ արդեօք արժանաւոր վարձատրութիւն։

Օր մի Օռլեաքի մէջ ուսումնարանի վարձատրութիւն բաշխուելու հանդիսի օրուան պէս, շքեղաշուք և բազմաթիւ ժողովք կար։ — Ֆրանսիայի հռչակաւոր և երևելի ու բարձրագոյն կարգի աստիճանաւորները պատուել էին այդ ժողովը իւրեանց ներկայութեամբը։ — Պերճախօս ձայն մի կպատմէ այդ աստիճանի ազնիւ, և այդ աստիճանի պարզ կենաց վերայօք։ — Ամենուն սիրտն ալ շարժուած

է. — բոլորն ալ կուլան . . . : Ընուն մի կհրատարակուի որպէս երբեմն ուսումնարանի մէջ. այդ անունն՝ Յան Վ՝ ԺԺեսյին էր:

Բայց պատանին արդէն եղել էր կատարեալ այր: — Պատկը, որ կղարդարէր նորա ճակատը, նոր կենաց մէջ մտած ժամանակը . . . փոխուեցաւ ազնիւ քաղաքացւոյ պատկի:

Նա կելնէ ամբիոնի վերայ . . . կլսուի ծափահարութիւն . . . : Բայց նա անտարբերութեամբ կլսէ այդ հասարակաց գովասանական բոլոր բեմբասացութիւնը, նա կորոնէ մէկուն, նորա աչքերը դէպ ի դահլիճի անկիւնը ուղղուած՝ կնկատէին խեղճ և ալեւոր կնոջ մի, որ հազիւ հազ կարողանար կենալ ոտից վերայ, որոյ թոյլ ուժը կենդանացած էր միայն իւր առնազելի որդին ունեցած սրբազան սիրովը, — նա իւր դողդոջուն ձեռքերը երկնցուցած դէպ ի որդին կդրուցէ առաջուան պէս,

— Ստու

՜ծ օրհնէ զքեզ . . . իմ բարի որդիս . . . քեզմով միայն երջանիկ էր իմ կեանքս:

Թ՝ՐՔ՝ Ի ՌՈՍԷԷՆԷ
ԼՈՒՍԻԱ Մ՝ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ՝
Ի ԳԷՔՔԷՐԷՈՆՔՈՒԼԷ:

ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՆԴԱԿ՝ — ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ — ՀՐԱՀԱՆԳ՝ — ՅՈՒՅԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ՝ — ԴԱՐՁԵԱԼ ԿՈՆԴԱԿ՝

Ինչպէս որ անցեալ Ամսագրի մէջ խոստացուեցաւ, տհաւասիկ ներկայ Թուոյս մէջ՝ Վ՝ԼԿ՝ Հայրապետի՝ Ն՝ԵՄԱՐԱՆԻ բացման ժամանակը ծանուցանելոյ և տաշակերտները պահանջելոյ համար ի վիճակս ուղղած Կոնդակին՝ Ն՝ԵՄԱՐԱՆԻ Հիմնական Ծրագրին, պահանջեալ աշակերտաց համար կարեւոր եղած Հրահանգին, աշակերտ պահանջուած տեղեաց և կողմանց ցուցակին, ևս ի վիճակս խրկուած երեք հաւաքիչ Վարդապետաց ի ձեռս նուիրահաւաքութեան համար յանձնուած տումարին ի ճակատ եղած Կոնդակին կարեւոր պարբերութեանց պատճէնները, կիրութամբ հրատարակել ի գիտութիւն և ի տեղեկութիւն համայն սիրելի եղբարց մերոց:

— Նաև տոտ աւելորդ չէ յիշել, որ հիմնական Ծրագրին մէջ նշանակեալ երկու լեզուաց և երկու առարկայից դասաւանդութիւնքը առայժմ պարտաւորիչ չեն Ն՝ԵՄԱՐԱՆԻ առաջին շրջանի մէջ: —

Ա՝հաւասիկ Կոնդակը

" . . . . Օ՜ի՝ եթէ աղդային բանասէր ոք առ սէր ծանօթութեան ընդ նախասկիզբն հեղինակաց մտաւոր և բարոյական զարդացման Հայազնեայ եղբարց իւրոց ուշի ուշով յակն արկանիցէ զգիրս պատմութեան իւրոց նախահարց՝ անդստին յօրէ ծագման ի մեզ Քրիստոնէական հաւատոյ կենսագործ լուսոյ վարդապետութեան, կամ եթէ կամիցի ոք զոյդ ընդ հետաքննութեանս ընդ այսմիկ ի միտ առնուլ միանգամայն զընթացս ուսումնական դասախարակութեան Ազգիս յայլ և այլ շրջանս քաղաքական կենաց նորա՝ խաղամուտ լինելոյ աղագաւ՝ թէ ո՞ւմ ուրեք պարտ իցէ ի նախնեաց շնորհապարտ զանձն խոստովանել վասն մշակութեան և անկորուստ պահպանութեան հայացի բարբառոյ և դպրութեան, ապաքէն յայն-